

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0811.07.5 «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Որակավորումը՝ 0811.06.01.5 «Կրտսեր անասնաբույժ»
I. Դերը	«Կրտսեր անասնաբույժ» որակավորմամբ մասնագետը իրականացնում է սանիտարահիգիենիկ միջոցառումներ, կենդանիների կլինիկական հետազոտություն, հիվանդությունների նախնական ախտորոշման և կանխարգելման աշխատանքներ, մասնակի վիրահատական միջամտություններ, արհեստական սերմնավորման, ծննդօգնության և առաջնային բուժմիջոցառումներ, ինչպես նաև տրամադրում է խորհրդատվություն:

II. Խնդիրների բնագավառները

Խնդիրների բնագավառ 1. Սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացում

Աշխատանքային գործընթացը	Անցկացնում է անասնապահների հետ զրույցներ և խորհրդատվություն սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ: Պլանավորում է այցելությունների և մոնիթորինգի ժամանակացույցը, վարում է այցելությունների գրանցամատյանը: Նախապատրաստում է անասունների բուժման համար անհրաժեշտ գործիքները և սարքավորումները, ստուգում դրանց սարքին լինելը: Իրականացնում է դեղանյութերի և կենսապատրաստուկների պահպանում համապատասխան տարաներում և ռեժիմներում: Կատարում է անասնաշենքերի, հարակից տարածքների, վիրահատարանների ախտահանություն, մակաբուժազերծում, վիրաբուժական նյութերի նախապատրաստում: Ապահովում է կենդանիների ախտորոշման և բուժկանխարգելման գործընթացին մասնակցող մասնագետների համար անվտանգ միջավայր՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:
--------------------------------	--

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ զրույցները անցկացված են և խորհրդատվությունը տրամադրված է, 2) գրանցամատյանում կատարված են համապատասխան նշումներ այցելությունների և մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ, 3) գործիքները և սարքավորումներն ախտահանված են և աշխատում են անխափան, 4) դեղանյութերը, կենսապատրաստուկները և վիրաբուժական նյութերը համապատասխանում են ընդունված նորմերին, 5) կենդանիների և աշխատակիցների համար ապահովված են սանիտարահիգիենիկ նորմերը, և պահպանված են աշխատանքի անվտանգության կանոնները:
----------------------------	--

Խնդիրների բնագավառ 2. Անասնաբուժասանիտարական միջոցառումների իրականացում

Աշխատանքային գործընթացը	Հավաքում է ախտաբանական նմուշներ, կատարում կոնսերվացում և ստուգման համար ուղարկում համապատասխան լաբորատորիաներ՝ լրացնելով անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթեր: Կատարում է կենդանիների արտաքին զննում և հետազոտում: Հավաքված տվյալները ներկայացնում է անասնաբույժին: Ձեռնարկում է համապատասխան բուժկանխարգելիչ միջոցառումներ՝ նշանակված անասնաբույժի կողմից:
--------------------------------	---

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ախտաբանական նմուշները հավաքված և ուղեկցող փաստաթղթերի հետ ներկայացված են համապատասխան լաբորատորիաներ, 2) կենդանիների արտաքին զննումը և հետազոտումը կատարված է, 3) հավաքված տվյալները պատշաճ կարգով ներկայացված են անասնաբույժին, 4) անասնաբույժի կողմից նշանակված համապատասխան բուժկանխարգելիչ միջոցառումներն իրականացված են:
----------------------------	---

Խնդիրների բնագավառ 3. Մասնակցություն կենդանիների հիվանդությունների ախտորոշմանը և բուժմանը

Աշխատանքային գործընթացը	Մասնակցում է կենդանիների հիվանդությունների ախտորոշման գործընթացին: Կատարում է կենդանիների տարբեր սեռահասակային խմբերի, հիվանդ կենդանիների խնամքի և պահվածքի համար անհրաժեշտ զոոհիգիենիկ և մասնակի բուժիչ միջոցառումներ: Կատարում է անասնաբուժական նախնական
--------------------------------	--

	ախտորոշման և բուժման գործընթաց՝ հատուկ սարքավորումների և գործիքների կիրառմամբ, ցուցաբերում կենդանիներին առաջին բուժօգնություն անհետաձգելի իրավիճակներում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ախտորոշման գործընթացը կատարված է, 2) կենդանիների տարբեր սեռահասակային խմբերի, հիվանդ կենդանիների խնամքի և պահվածքի համար անհրաժեշտ միջոցառումներն իրականացված են, 3) զոոհիգիենիկ և մասնակի բուժիչ միջոցառումներն իրականացված են, 4) հատուկ սարքավորումների և գործիքների կիրառմամբ ձեռնարկված է համապատասխան ախտորոշում, 5) անհետաձգելի իրավիճակներում առաջին բուժօգնությունը ցուցաբերված է:
Խնդիրների բնագավառ 4. Վիրահատական, ծննդօգնության և արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում	
Աշխատանքային գործընթացը	Կատարում է եղջյուրների և ամորձիների վիրահատական, կճղակների մշակման և ծննդօգնության գործողություններ: Իրականացնում է արհեստական սերմնավորման աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) եղջյուրների վիրահատությունը կատարված է, վերքերը մշակված են, 2) կճղակների մշակումը կատարված է, 3) ամորձատուփը և համապատասխան մշակումը կատարված է, 4) ծննդօգնության աշխատանքները կատարված են, 5) արհեստական սերմնավորման նախապատրաստական աշխատանքները կատարված են, 6) արհեստական սերմնավորումը կատարված է:
Խնդիրների բնագավառ 5. Մասնակցություն կենդանական ծագում ունեցող հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննության անցկացմանը	
Աշխատանքային գործընթացը	Իրականացնում է կենդանիների նախասպանդային հետազոտություններ, հավաքում է անասնաբուժասանիտարական փորձաքննության համար կենդանական ծագում ունեցող հումքի նմուշներ, մասնակցում է ախտաբանաանատոմիական փոփոխությունների բացահայտումներին, վարակազերծում է որակի տեսանկյունից սահմանված չափանիշներին չհամապատասխանող կենդանական ծագում ունեցող հումքը, օգտահանում է խոտանվածք:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կենդանիների նախասպանդային հետազոտությունները կատարված են, 2) անասնաբուժասանիտարական փորձաքննության համար կենդանական ծագում ունեցող հումքի նմուշները վերցված են, 3) ախտաբանաանատոմիական փոփոխությունները բացահայտված են, 4) որակի տեսանկյունից սահմանված չափանիշներին չհամապատասխանող կենդանական ծագում ունեցող հումքը վարակազերծված է, 5) խոտանվածք օգտահանված է:
Խնդիրների բնագավառ 6. Հակահամաճարակային միջոցառումների իրականացում	
Աշխատանքային գործընթացը	Կատարում է հակահամաճարակային միջոցառումներ ինֆեկցիոն և մակաբուժային հիվանդությունների դեմ, կատարում է պասիվ և ակտիվ պատվաստումներ, վարակիչ հիվանդությունների ժամանակ իրականացնում է ընթացիկ և եզրափակիչ ախտահանություններ: Իրականացնում է սահմանափակող միջոցառումներ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: Անասնապահների հետ անցկացնում է զրույցներ և կատարում խորհրդատվություն վարակիչ և մարդկանց համար վտանգ ներկայացնող զոոանտրոպոնոզ հիվանդությունների մասին:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումները կատարված են, 2) հակահամաճարակային միջոցառումները ինֆեկցիոն և մակաբուժային հիվանդությունների դեմ կատարված են, 3) պասիվ և ակտիվ պատվաստումները կատարված են, 4) սահմանափակող միջոցառումները վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործում կատարված են, 5) վարակիչ հիվանդությունների ժամանակ ընթացիկ և եզրափակիչ

	<p>ախտահանությունները կատարված են,</p> <p>6) վարակիչ և մարդկանց համար վտանգ ներկայացնող զոոանտրոպոնոզ հիվանդությունների մասին խորհրդատվությունը և զրույցները կատարված են:</p>
III. Պատասխանատվությունը	<p>Պատասխանատու է.</p> <ol style="list-style-type: none"> 1) սանիտարահիգիենիկ միջոցառումների, 2) անասունների և իրեն վստահված արտադրական միջոցների, 3) հանձնարարված աշխատանքների և իր աշխատանքային պարտականությունների անթերի կատարման, 4) աշխատանքի անվտանգության պահպանման, 5) շրջակա միջավայրի պահպանության, 6) կազմակերպության մշակած ներքին կարգուկանոնի պահպանման, 7) հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման և իրականացման, 8) ինֆեկցիոն և մակաբուժային հիվանդությունների դեմ պայքարի, 9) պասիվ և ակտիվ պատվաստումների կատարման, 10) վարակիչ հիվանդությունների ժամանակ իրականացվող ընթացիկ և եզրափակիչ ախտահանությունների, 11) վարակիչ հիվանդությունների կանխարգելման ժամանակ սահմանափակող միջոցառումների իրականացման համար:
IV. Լեզուներ	<p>հայերեն - լավ</p> <p>երկու օտար լեզու- բավարար (որակավորման պահանջներին համապատասխան)</p>
V. Համակարգիչը	<p>MS Word-բավարար</p> <p>MS Excel-բավարար</p> <p>MS Power Point-բավարար</p> <p>Internet Explorer-բավարար</p>
VI. Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> • կենդանիների հիվանդությունների ախտորոշման, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկման և բուժման վերաբերյալ գործող հիմնական նորմատիվ իրավական ակտերն ու տերմինաբանությունը, • ախտահանման, միջատազերծման և դերատիզացիայի (կրծողների ոչնչացում) անցկացման կարգը, • կերերի հիմնական տեսակները, դրանց սննդային արժեքը, կերակրման նորմաները, • նորածինների խնամքի հետ կապված առանձնահատկությունները, • կենդանիների օրգանների կառուցվածքը, դերը, դրանց անատոմիական և տարիքային առանձնահատկությունները, • տարբեր տեսակի կենդանիների նորմավորված ու լիարժեք կերակրման համակարգի հիմնական տարրերը, • դոզավորման կանոնները և տարբեր բուժիչ նյութերի ներմուծման եղանակները, • թունավորումների ժամանակ կենդանիներին առաջին բուժօգնություն ցույց տալու կանոնները, • կենդանիների հիմնական վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններն ու դրանց բուժման եղանակները, վարակիչ հիվանդությունների վերացման միջոցառումները, • ընդհանուր մակաբուժաբուժության հիմունքները, • բազմացման օրգանների անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանի ֆիզիոլոգիան ու ախտորոշումը, • նորմալ ծննդաբերության ժամանակ կենդանիներին օգնություն ցուցաբերելու եղանակներն ու միջոցները, • կենդանիների սեռական օրգանների և կաթնագեղձերի հիվանդությունների նախնական ախտորոշումը, հիվանդության կանխարգելումն ու առաջնային բուժումը, • մորթից առաջ կենդանիների զննման մեթոդաբանությունը, • կենդանական ծագում ունեցող հումքի, մթերքների անասնաբուժասանիտարական փորձաքննության կանոնները,

	<p>վնասագերծման եղանակները,</p> <ul style="list-style-type: none"> • անասնաբուժական միջոցառումների պլանավորման, կազմակերպման և կատարման կարգը, • աշխատանքի անվտանգության, արտադրական սանիտարիայի և հակահիդրեհային պաշտպանության կանոններն ու նորմերը:
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<ul style="list-style-type: none"> • անցկացնել կանխարգելման, բուժման, հակահամաճարակային և անասնաբուժասանիտարական միջոցառումներ, • կատարել հիվանդ կենդանիների կլինիկական զննում, հիվանդության նախնական ախտորոշում և առաջնային բուժում, • վերցնել ախտաբանական նմուշներ՝ լաբորատոր հետազոտությունների համար, • իրականացնել կենդանիների հոլիոսյան ամենասկզբնական ախտորոշում, արհեստական սերմնավորում, ամորձատում, • կազմակերպել անասնաշենքերի և գոմաղբի ժամանակին ախտահանում, սատկած կենդանիների դիակների հավաքում, • հետևել անասունների թաղման վայրի, սպանդանոցի անասնաբուժասանիտարական վիճակին, • իրականացնել կերերի, արոտավայրերի, ջրելատեղերի, սարքավորումների և գործիքների սանիտարական վիճակի վերահսկում, • վարել հաշվառման և հաշվետվության գործընթացը, ձևակերպել անասնաբուժական փաստաթղթերը, • իրականացնել գոմաղբի կենսաջերմային ճիշտ վնասագերծման, կենդանիների ու թռչունների տեղափոխումից հետո մեքենաների ու տարաների լվացման և ախտահանման վերահսկում, • որոշել գյուղատնտեսական կենդանիների տեսակը, ցեղը, բուծածությունը, կենդանի քաշը, գույնը, • դուրս գրել դեղատոմսեր, դոզավորել դեղամիջոցները տարբեր խտություն ունեցող պատրաստուկներով, • թունավորման ժամանակ կենդանիներին ցույց տալ առաջին բուժօգնություն, • իրականացնել կենդանիների վիրաբուժական հիվանդությունների նախնական ախտորոշում, կանխարգելում և առաջնային բուժում, • մասնագիտական գործունեության մեջ կիրառել համակարգչային տեխնիկա և հեռահաղորդակցման միջոցներ, հետևել շրջակա միջավայրի մաքրության պահպանմանը:
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պետք է ունենա աշխատասիրություն, նվիրվածություն, կարգապահություն, ազնվություն, պատասխանատվություն, ինքնապահանջկոտություն, ստեղծագործական կատարելագործման և նորարարության ձգտում, կոլեգիալ հարաբերությունների ճկունություն:</p> <p>Լինի մտածող, պարկեշտ, անկաշկանդ, հաղորդակցվող, մաքրասեր, հարգալից, նորարար, ընկերասեր:</p>